

ՀՐԱՄԱՆ
27.06.2018թ. № 275

Ճեմարանի 2017-2018 ուստարվա «Հեքիաթ» ճամբարի կազմակերպման աշխատանքները սկսելու նպատակով՝

1. Հաստատել Ճեմարանի կրթական ծրագրով նախատեսված ամառային ուսուցման և հանգստի կազմակերպման հրապարակային համաձայնագրի (պայմանների) օրինակելի ձևը՝ համաձայն հավելված 1-ի:

2. Հաստատել Ճեմարանի աշխատակիցների, շրջանավարտների կամ այլ ցանկացողների հանգստի կազմակերպման ծառայությունների մատուցման հրապարակային պայմանագրի (պայմանների) օրինակելի ձևը՝ համաձայն հավելված 2-ի:

ՃԵՄԱՐԱՆԻ ՏՆՕՐԵՆ՝ Աշոտ Ալիխանյան

Կատարողներ՝ Շ. Բարսեղյան

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հիմք ընդունելով Ճեմարանի և Սանի Ծնողի միջև 2017-2018 ուստարվա համար կնքված մասնագիտացված կրթական ծրագրի իրականացման պայամանագրի 1.4 (ՄԴ) և 1.6 կետերի դրույթները, կողմերը կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. Սույն համաձայնագրով Ճեմարանը պարտավորվում է իր «Հեքիաթ» ճամբարում ապահովել Սանի՝ կրթական ծրագրով նախատեսված ամառային ուսուցման և հանգստի կազմակերպման աշխատակարգի իրականացումը:
2. Աշխատակարգը իրականացվում է երկու հերթափոխով (ժամանակահատվածով): Մեկ հերթափոխի տևողությունը սահմանվում է 6-ից 12 օր և հաշվարկվում է ըստ գիշերակացի օրերի թվի:
3. Ամառային ուսուցման և հանգստի կազմակերպման մեկ օրվա վարձավաճարի չափը սահմանվում է 5500 (հինգ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ:
4. Կողմերի վավերապայմանները, աշխատակարգի իրականացման ժամկետները և արժեքը սահմանվում են սույն համաձայնագրի անբաժանելի մասը հանդիսացող ուղեգրով:
5. Ուղեգիր

___ **ՀԵՐԹԱՓՈԽ, ՈՒՂԵԳԻՐ N°** ___

Մեկնելու օրը՝ _____, 2018թ.
 ուղղություն՝ Ճեմարանից գ. Մեղրաձոր
 Վերադարձի օրը՝ _____, 2018թ.
 ուղղություն՝ գ. Մեղրաձորից Ճեմարան
 Օրերի թիվը՝ _____ օր
 Ուղեգրի արժեքը՝ _____ ՀՀ դրամ

Սան _____
 Ա.Ա.Ն.

Ծնող՝ _____
 պարոն՝ _____
 Ա.Ա.Ն.

Անձնագիր _____ տրվ. է _____ ում կողմ. _____
 Հեռախոս՝ բջջ. _____, քաղ. _____
 E-mail _____

 ստորագրություն

տիկին _____
 Ա.Ա.Ն.

Անձնագիր _____ տրվ. է _____ ում կողմ. _____
 Հեռախոս՝ բջջ. _____, քաղ. _____
 E-mail _____

 ստորագրություն

«Շիրակացու ճեմարան» Միջազգայի գիտակրթական
 համալիր» ՓԲԸ
 375079, ք. Երևան, Արտեմ Միկոյան, 35
 ՀՎՀՀ 00804754
 ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ ՓԲԸ
 h/h 1150003768028007
 Գլխավոր տնօրեն

Ա.Ալիխանյան

ք. Երևան « » _____ 2018թ.

ՃԵՄԱՐԱՆԻ «ՀԵՔԻԱԹ» ՃԱՄԲԱՐՈՒՄ ԱՄԱՌԱՅԻՆ ՀԱՆԳՍՏԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ (ՊԱՅՄԱՆՆԵՐ)

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Սույնով սահմանվում են «Շիրակացու ճեմարան» միջազգային գիտակրթական համալիր» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Կազմակերպող կամ Ճեմարան) կողմից իր «Հեքիաթ» ճամբարում ամառային հանգստի կազմակերպման ծառայությունների մատուցման պայմանները:

1.2 Սույն պայմանները հանդիսանում են հրապարակային առաջարկ, որն ընդունելու պահից հանդիսանում է Կազմակերպողի և Հանգստացողի (երկուսը միասին համատեղ հիշատակման դեպքում այսուհետ կանվանվեն՝ Կողմեր) միջև կնքված՝ Կողմերի համար պարտադիր ուժ ունեցող պայմանագիր:

1.3 Կազմակերպողին ներկայացված համապատասխան դիմումը և /կամ սույն պայմանների կատարմանն ուղղված գործողությունների կատարումը համարվում է սույն պայմանների ընդունում: Սույն պայմանները ուղեգրի և Կազմակերպողի կողմից սահմանված պայմանների հետ միասին կհանդիսանան Կազմակերպողի և Հանգստացողի միջև կնքված՝ ծառայությունների մատուցման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր):

Հասկացություններ

Հանգստացող՝ ֆիզիկական անձ, ով Կազմակերպողի հետ կնքել է իր հանգիստը մեկ հերթափոխով (ոչ պակաս 6 օրից), «Հեքիաթ» ճամբարում կազմակերպման պայմանագիր: Այն դեպքում, երբ պայմանագրի կնքման պահին չի լրացել հանգստացողի տասնութ տարին, ապա նրա փոխարեն պայմանագիրը ստորագրվում է նրա ծնողի կամ օրինական այլ ներկայացուցչի (այսուհետ՝ Ծնող) կողմից:

Հերթափոխ՝ «Հեքիաթ» ճամբարում հանգստի կազմակերպման ժամանակահատված, որի տևողությունը սահմանվում է ըստ գիշերակացի օրերի թվի և կազմում է 6-ից 12 օր:

Ուղեգիր՝ Կողմերի վավերապայմանները, հանգստի կազմակերպման ժամանակահատվածը, օրերի թիվը և պայմանագրի գինը սահմանող փաստաթուղթ:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Կազմակերպողը պարտավոր է հանգիստը կազմակերպել պատշաճ որակով:

2.2. Հանգստացողը պարտավոր է՝

2.2.1. վճարել ուղեգրի արժեքը,

2.2.2. հետևել «Հեքիաթ» ճամբարի ներքին կանոններին:

2.3. Կազմակերպողը իրավունք ունի ցանկացած ժամանակ հրաժարվել պայմանագիրը կատարելուց՝ Հանգստացողի կողմից «Հեքիաթ» ճամբարի ներքին կանոնները խախտելու դեպքում:

2.4. Հանգստացողն իրավունք ունի պահանջել հանգիստը կազմակերպել պատշաճ որակով:

3. Պայմանագրի գինը և հաշվարկների կարգը

3.1. Սույն պայմանագրով հանգստի կազմակերպման մեկ օրվա (ըստ գիշերակացի) վճարի չափը կազմում է 6400 (վեց հազար չորս հարյուր) ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ): Պայմանագրի գինը հաշվարկվում է մեկ օրվա վճարի չափի և ուղեգրով ամրագրված օրերի թվի արտադրյալով:

3.2. Հանգստացողի կողմից Կազմակերպողին պայմանագրային գինը վճարվում է սույն պայմանագրի համաձայն ուղեգիրը ստորագրելու պահին:

4. Եզրափակիչ դրույթներ

4.1. Սույն պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով:

4.2. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

4.2. Սույն պայմանագիրը համարվում է կնքված Հանգստացողի կողմից ուղեգիրը ստորագրելու պահից և գործում է մինչև ուղեգրով սահմանված վերադարձի օրը:

5. Ուղեգիր

___ ՀԵՐԹԱՓՈՒՆ, ՈՒՂԵԳԻՐ N° ___

Մեկնելու օրը՝ ____ . ____ . 2018թ.

ուղղություն՝ Ճեմարանից գ. Մեղրաձոր

Վերադարձի օրը՝ ____ . ____ . 2018թ.

ուղղություն՝ գ. Մեղրաձորից Ճեմարան

Օրերի թիվը՝ _____ օր

Ուղեգրի արժեքը՝ _____ ՀՀ դրամ

Հանգստացող _____

Ա.Ա.Հ.

Անձնագիր _____ տրվ. է _____ ում կողմ. _____

Հեռախոս՝ բջջ. _____ , քաղ. _____

E-mail _____

ստորագրություն

Ծնող՝ _____

Ա.Ա.Հ.

Անձնագիր _____ տրվ. է _____ ում կողմ. _____

Հասցե՝ _____

Հեռախոս՝ բջջ. _____ , քաղ. _____

E-mail _____

ստորագրություն

(1. Լրացվում է Հանգստացողի ծնողի կողմից, եթե հանգստացողի 18 տարին դեռ չի լրացել):

«Շիրակացու ճեմարան» Միջազգային գիտակրթական համալիր» ՓԲԸ

375079, ք. Երևան, Արտեմ Միկոյան, 35

ՀՎՀՀ 00804754

ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ ՓԲԸ

h/h 1150003768028007

Գլխավոր տնօրեն

Ա.Ալիխանյան

ք. Երևան, « _____ » _____ 2018թ.